

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ ԳՅՈՒՂ ԲԱԳՐԱՎԱՆ

Ծ Ր Ա Գ Ի Ր

ԲԱԳՐԱՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
2017 - 2021 թթ. ՍՈՑԻԱԼ - ՏՆՍԵՍԱԿԱՆ
ԶԱՐԳԱՑՄԱՆ

ԿԱԶՄԵՑ՝ ԲԱԳՐԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝
ԱՐՏՅՈՄ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Գ. ԲԱԳՐԱՎԱՆ - 2016 Թ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

- 1.1. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ
- 1.2. ՀԱՄԱՅՆՔԻ ԱՇԽԱՀՐԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ, ՌԵԼԻԵՖԸ
- 1.3. ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ
- 1.4. ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ
- 1.5. ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ
- 1.6. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ
- 1.7. ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ
- 1.8. ԽՄԵԼՈՒ և ՌՈՌԳՄԱՆ ՋՈՒՐ
- 1.9. ՏՐԱՆՍՊՈՐՏ և ԿԱՊ
- 1.10. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱՊԵՐ ԵՎ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
- 1.11. ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ
- 1.12. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ
- 1.13. ԿՐԹՈՒԹՅՈՒՆ, ՄՇԱԿՈՒՅԹ, ՄՊՈՐՏ ԵՎ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ
- 1.14. ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐԸ
- 1.15. ՀԱՄԱՅՆՔԻ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ
- 1.16. ՀԱՄԱՅՆՔԻ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
- 1.17. ՀԱՄԱՅՆՔԻՆ ՄՊԱՌՆԱՑՈՂ ՎՏԱՆԳՆԵՐԸ

2. ՀԱՄԱՅՆՔԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

- 1.2. Համայնքի ռազմավարությունն է.
- 1.3. Հիմնական նպատակները

3. ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ և ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

- 3.1. ՏԵՂԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ և ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ
- 3.2. ՏԵՂԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ և ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ
- 3.3. ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳՐՈՒՄ ՆԵՐԱՌԿԱԾ ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ
- 3.4. ՏԵՂԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԱՊԱՌՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ
- 3.5. ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԱՊԱՌՔՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԳՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ
- 3.6. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՎԵՐՋԻՆ 10 ՏԱՐԻՆԵՐԻՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԾՐԱԳՐԵՐ ՄԱՍԻՆ

4. ԸՍՏ ԱՌԱՆՁԻՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԻ ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ԾՐԱԳՐԵՐԻ, ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԱՌԱՋԱԴՐՈՒՄ և ԿՈՆԿՐԵՏ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՁԱԿԵՐՊՈՒՄ

5. ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Շիրակի մարզի Բագրավան համայնքի 2017-2021 թթ. համալիր զարգացման ծրագիրը մշակված է ՀՀ սահմանադրությամբ և օրենքներով տեղական ինքնակառավարման մարմիններին վերապահված իրավասությունների շրջանակներում և հանդիսանում է համայնքի համալիր զարգացմանն ուղղված ուղեցույց փաստաթուղթ:

Ծրագրի հիմքում դրված են համայնքում առկա առաջնային հիմնախնդիրների լուծմանն ու տեղական ինքնակառավարման մարմինների կողմից համայնքում մատուցվող ծառայությունների ծավալների ավելացմանն ուղղված համայնքի ղեկավարի նախընտրական ծրագրի դրույթներն ու համայնքի ընտրողների կողմից տրված պատվիրանները : Ծրագիրը ձևավորվել է համայնքի վրա արտաքին միջավայրի ազդեցության համակողմանի վերլուծության, սոցիալ-տնտեսական ներքին իրավիճակի գնահատման, առկա և ներուժային հնարավորությունների /բնական, աշխարհագրական, տնտեսական, սոցիալական, ֆինանսական, մարդկային/ հաշվառման արդյունքում:

Այն տարածաշրջանի գյուղական համայնքները բնութագրող և նրա զարգացումը նախանշող ուղեցույց փաստաթուղթ է, որը կարող է իր արձագանքը գտնել կառավարության տարածքային զարգացման քաղաքականության, գյուղական համայնքների համաչափ զարգացման և աղքատության կրճատման ռազմավարական ծրագրերում:

Ծրագիրն ավելի իրատեսական դարձնելու համար գնահատվել են համայնքի ֆինասական ռեսուրսնորը և առաջարկված ծրագրերից ակնկալվող արդյունքները, կատարվել են իրավիճակի վերլուծություններ և կանխատեսումներ, ներկայացվել են վիճակագրական տեղեկություններ:

Ծրագրում ներառված խնդիրները և դրանց առաջնահերթությունները չեն հավակնում լինել վերջնական և ծրագրերի իրականացման ընթացքում արտաքին և ներքին գործոնների ազդեցությունից ենթադրվում են համապատասխան փոփոխություններ:

1. ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

1.1. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Թուրքական դարավոր բռնատիրությունից ազատագրվելու համար 1828- 1830 թթ. բնակավայրի նախնիները Արևմտյան Հայաստանից զանգվածաբար գաղթել են Արևելյան Հայաստան: Դա մի տեղաշարժ է եղել անկախությունը կորցրած հարազատ հայրենիքի մի վայրից՝ մյուսը:

Բագրավան գյուղը հիմնադրել է 1870-ական թթ., Արևմտյան Հայաստանի Ղարսի և Մուշի գավառներից գաղթած ընտանիքների կողմից: Բնակավայրը նախկինում անվանվել է Բուղդաշեն: Գյուղը գտնվելով պատմական Անի քաղաքից 12կմ. հեռավորության վրա, ի մեծարումն Բագրատունյաց թագավորության, 1930-ական թթ.-ին գյուղը վերանվանվել է Բագրավան: Ըստ հայտնաբերված հնագիտական հուշարձանների տեղագրության տեղանքը բնակեցված է եղել դեռևս վաղ բրոնզե դարում: Բնակավայրի տարածքում Խարկով գյուղի (նեկայումս Նորշեն) պահպանվել է XIII դարում կառուցված եկեղեցի, ինչպես նաև Անիի տուֆից կառուցված շինությունների ավերակներ:

1880-ական թթ. Բուղդաշենը ընդգրկվել է Ալեքսանդրապոլի գավառի կազմում: 1921թ. բնակավայրը ընդգրկվել է Խորհրդային Հայաստանի կազմում: 1937թ. մինչև 1996թ. բնակավայրը ընդգրկված է եղել Անիի շրջանի կազմում: 1996թ.-ից ՀՀ վարչատարածքային վերջին բաժանումից հետո Բագրավանը որպես վարչական առանձին միավոր / համայնք/ ընդգրկված է ՀՀ Շիրակի մարզի կազմում:

Բագրավանը ակտիվ մասնակցություն է ունեցել Հայրենական Մեծ պատերազմին և Արցախյան ազատամարտին:

1.2. ՀԱՄԱՅՆՔԻ ԱՇԽԱՀՐԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ, ՌԵԼԻԵՖԸ

Բագրավանը տեղակայված է Արագած լեռան հյուսիս-արևմտյան լանջին, Շիրակի դաշտավայրի հարավ-արևմտյան և Թալինի սարավանդակի հյուսիսային մասում:

Թուրքիայի սահմանից գտնվում է 8 կմ. հեռավորության վրա:

Ծովի մակերևույթից բարձր է 1520մ.: Բնակավայրը ընդգրկված է հանրապետության նախալեռնային բնակավայրերի ցանկում:

Բնակավայրին առանձնահատուկ են ցուրտ, ձյունառատ ձմեռները և զով ամառային եղանակները: Օդի տարեկան միջին ջերմաստիճանը կազմում է 8-9

աստիճան: Տարեկան միջին տեղումները կազմում են 350-600մմ., որոնք առանձնահատուկ են ապրիլ-մայիս և հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին:

Տարածքում գերակշռում են լեռնատափաստանային սևահողերը: Հարուստ է տուֆ քարով, շինարարական ավազով ու կավով: Բնակավայրի տարածքը հարուստ է արդեգյան ջրերով: Հողատարածքները մշտապես վտանգված են կարկտահարությամբ և տևական երաշտով: Տարածքը գտնվում է ուժեղ սեյսմիկ գոտում: Հիշարժան են 1926 և 1988թթ. աղետալի երկրաշարժերը:

Համայնքի վարչական տարածքը կազմում է 6254.67 հա., որից գյուղատնտեսական նշանակության հողեր են 5884.31 հա-ը, այդ թվում 2089.43 հա՝ վարելահող, 3602.86 հա՝ արոտավայր և 109.84հա այլ հողատեսքեր:

Համայնքի կառուցապատված տարածքը զբաղեցնում է 90.8հա.:

Բնակավայրը գտնվում է նախկին շրջկենտրոնից 47կմ., մարզկենտրոնից 42կմ. և մայրաքաղաքից՝ 110կմ. հեռավորության վրա: Բնակավայրով է անցնում Գյումրի- Արմավիր- Երևան հանրապետական նշանակության ճանապարհը: Բնակավայրը երկաթուղային կայարանից գտնվում է 2.5կմ հեռավորության վրա:

1.3 ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Համաձայն տոհմագրական տեղեկությունների բնակավայրը հիմնադրվել է 1870թ.: Հիմնադիրները եղել են Ղարսից և Մուշից գաղթած ընտանիքները: Ըստ վիճակագրական տեղեկությունների սկզբնական շրջանում գյուղում բնակություն են հաստատել 50 ընտանիք:

Հայրենական Մեծ պատերազմից հետո բնակավայրի բնակչության թիվը կտրուկ նվազել է :

Համայնքը առավելագույն բնակչություն՝ 1400 մարդ, ունեցել է 1980-ական թվականներին:

Համայնքի առկա բնակչության տարիքային և սոցիալական կազմի ցուցանիշները

(01.01.2016 թ. դրությամբ)

Հ/հ	Ցուցանիշները	
1.	Առկա բնակչության թիվը, այդ թվում՝	861
	Տղամարդիկ	439
	Կանայք	422

	0-4 տարեկան	40
	5-6 տարեկան	28
	7-10 տարեկան	67
	11-14 տարեկան	57
	15-17 տարեկան	31
	18-22 տարեկան	63
	23-45 տարեկան	306
	46-62 տարեկան	178
	63 և բարձր տարիքի	91
2.	Կենսաթոշակառուներ, այդ թվում՝	97
	Տարիքային և աշխատանքային	91
3.	Փախստականներ	0
4.	Միակողմանի ծնողազուրկ երեխաներ	5
5.	Երկկողմանի ծնողազուրկ երեխաներ	0
6.	Հայրենական մեծ պատերազմի մասնակիցներ	0
7.	Արցախյան պատերազմի մասնակիցներ	13
8.	Հաշմանդամներ, այդ թվում՝	17
	Մանկուց հաշմանդամներ	1
9.	Աշխատունակներ	547
10.	Զբաղվածներ	65
11.	Գործազուրկներ	482
13.	Ընտանեկան նպաստների պետական համակարգում գրանցված ընտանիքների թիվը	19
14.	Արցախյան պատերազմում զոհվածների ընտանիքների թիվը	1
15.	Բնակարանի կարիքավոր ընտանիքների թիվը, այդ թվում՝	15
	Անօթևան ընտանիքներ	0
16.	Բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող ընտանիքների թիվը	30
17.	Արտագնա աշխատանքի մեկնող ունեցող տնային տնտեսությունների թիվը	80
18.	Արտագնա (սեզոնային) աշխատանքի մեկնողների թիվը	120

1.4.ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆԸ

Ժողովրդի իշխանությունն իրականացնելու և համայնքային խնդիրները լուծելու նպատակով համայնքում օրենքով սահմանված կարգով ընտրված են համայնքի ավագանի / ավագանու 5 անդամ / և համայնքի ղեկավար: 2016թ. հոկտեմբերի 2-ին համայնքում կայացած համայնքի ղեկավարի ընտրությունների արդյունքներով,

առաջադրված 2 թեկնածուներից, համայնքի ղեկավար է ընտրվել գործող համայնքի ղեկավար Արտյոն Պետրոսյանը:

« Տեղական ինքնակառավարման մասին » և « Համայնքային ծառայության մասին » ՀՀ օրենքների համաձայն ձևավորվել է համայնքի ղեկավարի աշխատակազմ հետևյալ կառուցվածքով.

Հայեցողական պաշտոններ`

- Համայնքի ղեկավարի տեղակալ – 1 միավոր

Համայնքային ծառայության պաշտոններ`

- Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար – 1 միավոր
- Համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ-հաշվապահ – 1 միավոր
- Համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ - 1 միավոր

Տեխնիկական սպասարկում իրականացնող անձնակազմ

- Ակունքավար - 1 միավոր
- Գրադարանավար - 1 միավոր
- Հարկային գործակալ – 1 միավոր
- Համակարգչի օպերատոր – 1 միավոր
- Պոմպակայանի բանվոր – 1 միավոր

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԿԱԶՄԸ

N	Անուն, ազգանուն	Ծննդ.թիվը	Կրթություն	Կուս.պատկան.
1	Արկադի Գևորգյան	1982թ.	միջնակարգ	ՀՀԿ
2	Արտավազդ Ասատրյան	1960թ.	բարձրագույն	անկուս.
3	Արմեն Պետրոսյան	1979թ.	բարձրագույն	անկուս.
4	Արսեն Վարոսյան	1966թ.	միջնակարգ	ՀՅԴ
5	Գագիկ Գևորգյան	1980թ.	միջնակարգ	անկուս

ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԸ

N	Անուն, ազգանուն	Պաշտոնը	Կրթությունը	Ծննդ.թիվը
1	Արտյոն Պետրոսյան	Համայնքի ղեկավար	բարձրագ.	1971 թ.
2	Թափուր	Համայնքի ղեկ. տեղակալ		
3	Թափուր	Աշխատակազմի քարտուղար		
4	Վրույր Գևորգյան	Առաջատար մասնագ-հաշվապահ	միջ.մասնագ	1966թ.
5	Արտավազդ Վարոսյան	Առաջատար մասնագետ	բարձրագ.	1992 թ.
6	Արմենուհի Շթոյան	Հարկային գործակալ	բարձրագ.	1991թ.
7	Աշխեն Շթոյան	Համակարգչի օպերատոր	միջ.մասնագ	1982թ.
8	Նվարդ Մկրտչյան	Ակունքավար	միջ.մասնագ	1958թ.

Համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների կառուցվածքը և ներքին հարաբերությունները գրաֆիկական տեսքով ներկայացված է թիվ 1 հավելվածում:

1.5. ՀԱՄԱՅՄՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Համայնքի սեփականության գույքի ցանկը սահմանված է ՀՀ կառավարության 14.03.1997թ.« ՀՀ համայնքների սեփականության գույքի ցանկը սահմանելու մասին» թիվ 51 որոշմամբ:

Համայնքի գույքը ֆիզիկական և բարոյական մեծ մաշվածություն ունի: Քայքայված և անբարեկարգ վիճակում է մշակույթի տունը և մանկապարտեզի շենքը: Շենքային հարմարությունների բացակայության պատճառով անմխիթար վիճակում է գրադարանի 3000 կտոր գրականության պահպանությունը:

Խմելու ջրի ներհամայնքային ցանցը կառուցվել է 1970-ական թվականներին և մասնակի վերանորոգվել է 2015-16 թվականներին ,ունի 12000 մ. ընդհանուր երկարություն : Պոմպակայաններից մեկի խորքային պոմպը նորոգման կարիք ունի:

Անբարեկարգ և քայքայված վիճակում են ներհամայնքային ճանապարհները: Ներհամայնքային և դաշտամիջյան ճանապարհների առանձին տեղամասեր դարձել են անանցանելի և լուրջ դժվարություններ ստեղծվել գյուղատնտեսական աշխատանքների կազմակերպման համար:

Համենատաքար բարվոք վիճակում է գյուղի բուժ. մանկաբարձական կետը, որը նորոգվել է «ՆՈՎԱ» կազմակերպության կողմից:

2009թ-ի մայիս ամսից սկսված է բնակավայրի գազաֆիկացման աշխատանքները կատարված են 100 %-ը:

Բնակավայրի գազաֆիկացման ծրագրի շինարարների կողմից 2008թ. նորոգվել է գյուղապետարանի շենքը և ստեղծվել հարմարավետ պայմաններ:

Համայնքի սեփականության գույքի ցանկը ներկայացված է թիվ 2 հավելվածում:

1.6.ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿ ԱՅՐԻ ՊԱՅՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Բնակավայրը չունի կեղտաջրերի և անձրևաջրերի հեռացման համակարգեր: Կեղտաջրերի հեռացումը համայնքում կատարվում է անհատական խորքային հորերի միջոցով: Բնակավայրում աղբահանությունը կատարվում է համայնքի բնակիչների կողմից անհատական նախաձեռնությամբ և սանիտարական օրեր կազմակերպելու միջոցով:

1.7.ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

Համայնքում կա 170 անհատական առանձնատուն՝ 18900ք.մ. ընդհանուր մակերեսով և 30 բազմաբնակարան բնակելի շենքեր՝ 50 բնակարանով՝ 5600քմ ընդհանուր մակերեսով: Բնակավայրը գտնվելով 1988թ. «Սպիտակի» աղետալի երկրաշարժի գոտում, համայնքի բնակֆոնդի մոտ 30%-ը ունեն 2-3 աստիճանի վնասվածություն: Բնակարանային պայմանների կարիք ունեն համայնքի 42 ընտանիք:

Կան 14 առանձնատների անավարտ շինարարություն, որոնք միջոցների բացակայության պատճառով չեն շարունակվում:

1.8. ԽՄԵԼՈՒ և ՈՌՈԳՄԱՆ ՋՈՒՐ

Համայնքի խմելու ջուրը մատակարարվում է լոկալ համակարգով՝ տեղադրված խորքային 3 պոմպերի միջոցով: Խմելու ջրի որակը, որը պարբերաբար

ուսումնասիրվում է հակահամաճարակային ծառայության կողմից, բնութագրվում է բավարար և խմելու համար պիտանի: 2001թ. « ԱԴԲԱ» բարեգործական կազմակերպության կողմից իրականացված պոնպակայանի վերանորոգման և 20 տոննա տարողության ջրի կուտակիչի տեղադրման ծրագրի շնորհիվ զգալիորեն բարելավվել և կանոնակարգվել է բնակչության ջրամատակարարումը:

Համայնքը չունի ոռոգման համակարգ: Բնակավայրի հարևանությամբ է գտնվում Ախուրյանի ջրամբարը և ցանցի առկայության դեպքում կարող են օգտագործվել համայնքի ոռոգման կարիքների համար:

1.9. ՏՐԱՆՍՊՈՐՏ և ԿԱՊ

Միջհամայնքային ճանապարհը ասֆալտապատ է, բացառությամբ Թալինի տարածաշրջանի համայնքները կապող ճանապարհից:

Անբարեկարգ և քայքայված վիճակում են ներհամայնքային 4կմ ճանապարհները: Ներհամայնքային և դաշտամիջյան ճանապարհների առանձին տեղամասեր դարձել են անանցանելի և լուրջ դժվարություններ են ստեղծվում գյուղատնտեսական աշխատանքների կազմակերպման ժամանակ:

Բնակավայրը չունի փոստային բաժանմունք և սպասարկվում է Անիավան համայնքի տեղամասի կողմից: Բնակավայրը ապահովված է հեռախոսակապով:

Բնակավայրը ընդունում է 4 հանրապետական և 3 մարզային հեռուստաալիքներ:

Բնակավայր - մարզկենտրոն տրանսպորտային կապը ապահովվում է միկրոավտոբուսի 2 երթուղու միջոցով : Մայրաքաղաքի և համայնքների հետ կապը ապահովվում է Մարալիկ-Արմավիր-Երևան երթուղային ավտոբուսի միջոցով:

1.11. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱՊԵՐ ԵՎ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Համայնքը համախմբված է, որը սակայն չի հանգեցրել սոցիալական այնպիսի ինստիտուտների ձևավորմանը, ինչպիսիք են միությունները, միավորումները, նախաձեռնող խմբերը և այլն: Բնակչությունը սերտ կապեր ունի մոտակա բոլոր համայնքների հետ:

Համայնքը համագործակցության կապեր ունի հանրապետությունում գործող միջազգային կազմակերպությունների և հիմնադրամների հետ:

Հոգևոր ուղորտում համայնքը համագործակցում է Շիրակի թեմի Առաջնորդարանի հետ:

1.12. ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ

Հ/հ	Ցուցանիշները	Ընդամենը համայնքում
1.	Համայնքի վարչական տարածքը (հա), որից՝	6254.7
2.	Գյուղատնտեսական նշանակության հողեր (հա), այդ թվում՝	5859.87
	Արոտավայր	3380.04
	Վարելահողեր	2049.04
	Խոտհարք	82.18
	Պտղատու այգի	----
	Այլ հողեր	348.61
3.	Բնակավայրերի հողեր (հա), որից՝	107.53
	Բնակելի կառուցապատման	51.35
	Հասարակական կառուցապատման	3.33
	Խառը կառուցապատման	---
	Ընդհանուր օգտագործման	11.00
	Այլ հողեր	41.85
4.	Արտադրական նշանակության հողեր (հա)	114.56
5.	Էներգետիկայի տրանսպորտի և կապի, կոմունալ ենթակայության հողեր (հա)	31.72
6.	Անտառային հողեր (հա)	0
7.	Հատուկ պահպանության հողեր (հա)	11.18
8.	Հատուկ նշանակության հողեր (հա)	124.04
9.	Զբային հողեր (հա)	5.77

1.12. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

Գյուղտնտեսության բնագավառի հիմնական ճյուղերը հացահատիկային կուլտուրաների մշակությունն ու անասնապահությունն են: Ոռոգման ջրի բացակայության պատճառով համայնքը լուրջ դժվարությունների առաջ է կանգնած գյուղ.մթերքների կայուն արտադրություն կազմակերպելու հարցում:

Համայնքում կազմավորված են 218 գյուղացիական տնտեսություններ, որոնց կողմից մշակվում է 1796.84 հա. վարելահող: Դաշտավարության բնագավառում տնտեսությունները հիմնականում զբաղվում են ցորենի, գարու, կերային մշակաբույսերի, մասամբ կարտոֆիլի, կաղամբի և բանջարա- բոստանային այլ կուլտուրաների արտադրությամբ: Արտադրության արդյունավետությունը կախված

է բնակլիմայական բարենպաստ պայմաններից: Ցանկատարածությունները մշտապես վտանգված են երաշտով և կարկտահարությամբ: Հացահատիկային կուլտուրաների միջին բերքատվությունը բնակլիմայական բարենպաստ պայմաններում կազմում է 15-25 ցենտներ: Երաշտի, ցրտահարության կամ կարկտահարության դեպքում կորուստը կազմում է 50-100%:

Գյուղտնտեսական մեքենաներն ու մեխանիզմները բարոյապես ու ֆիզիկապես մաշված են, կա պահեստամասերի մեծ պահանջարկ:

Գյուղում կա ալրաղաց, որը լիովին բավարարում է բնակչության պահանջները: Համայնքի գյուղատնտեսության ոլորտի ցուցանիշները ներկայացված են թիվ 3 հավելվածում:

**ԲԱԳՐԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՌԿԱ ԱՆԱՄՆԱԳԼԽԱՔԱՆԱԿԻ
ՏՎՅԱԼՆԵՐԸ (01.01.2016 թ. դրությամբ)**

Հ/հ	Ցուցանիշները	Ընդամենը համայնքում
1.	Խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը, որից՝ Կովեր	582 306
2.	Խոզերի գլխաքանակը	490
3.	Ոչխարների և այծերի գլխաքանակը	830
4.	Ավանակների և ջորիների գլխաքանակը	0
5.	Զիերի գլխաքանակը	0
6.	Հավերի և այլ թռչունների գլխաքանակը	2753
7.	Մեղվաբնտանիքների քանակը	658

**ԲԱԳՐԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՌԿԱ՝ ՀԱՄԱՅՆՔԱԲՆԱԿՆԵՐԻ
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ
ՄԻՋՈՑՆԵՐԻ ՆԿԱՐԱԳԻՐՆ ՈՒ ՔԱՆԱԿՆԵՐ Ը**

Հ/հ	Ցուցանիշները	Ընդամենը համայնքում
1.	Մարդատար ավտոմեքենաներ	75
2.	Բեռնատար ավտոմեքենաներ	9
3.	Կոմբայններ	5
4.	Վարի տրակտորներ, որից՝ Թրթուռավոր	8 2
	Անվավոր(Կիրովեցներ(6
5.	Բելառուսներ	4

1.13.ԿՐԹՈՒԹՅՈՒՆ, ՄՇԱԿՈՒՅԹ, ՄՊՈՐՏ ԵՎ ԱՌՈՂՋԱՊԱՅՈՒԹՅՈՒՆ

Համայնքն ունի հանրակրթական մեկ դպրոց, որտեղ սովորում են 117 աշակերտ:

Դպրոցը կառուցվել է 1966թ. և 2002թ. նորոգվել է ՄԱԿ-ի Ջարգացման ծրագրի կողմից: Դպրոցն ունի 18 մանկավարժ և 6 սպասարկող անձնակազմ, մանկավարժներից 14-ը ունեն բարձրագույն կրթություն:

Համայնքի միակ մշակութային օջախը Մշակույթի տունն է : Մշակույթի տանն է տեղակայված գյուղական գրադարանը , որն ունի 3000 կտոր գրականություն: Մշակույթի տունը կառուցվել է 1950- ական թթ. և մինչև օրս հիմնական նորոգման չի ենթարկվել: Շենքի քայքայվածության և անբարեկարգ վիճակի պատճառով այն գրեթե չի օգտագործվում և չի ծառայում համայնքի կարիքների համար:

Մանկապարտեզի շենքը նույնպես գտնվում է քայքայված ու անբարեկարգ վիճակում և այն չի շահագործվում:

Հարմարություններ չկան համայնքի բնակչության հանգստի և ազատ ժամանցի կազմակերպման, երեխաների մշակութային և գեղագիտական դաստիարակության համար:

Միջոցների բացակայության պատճառով համայնքը չի կարող սեփական նախաձեռնությամբ կազմակերպել համայնքի մշակույթի տան և մանկապարտեզի շենքի նորոգման և գույքային համալրման աշխատանքները:

Համայնքի բնակչության առողջապահական սպասարկումը իրականացվում է Աղինի առողջության կենտրոնի և համայնքի բուժ. մանկաբարձական կետի

միջոցով: Համայնքի բուժ. մանկաբարձական կետը նորոգվել է «ՆՈՎԱ» ծրագրի աջակցությամբ և համայնքի կողմից կատարված ներդրուման շնորհիվ:

1.14. ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐԸ

- Բերրի վարելահողերի առկայությունը
- Տուֆ քարի, շինարական ավազի և կավի առկայությունը
- Ախուրյանի ջրամբարի հարևանությամբ գտնվելը / 6կմ /
- Գյումրի-Արմավիր մայրուղուն մոտ գտնվելը
- Երկաթուղային կային մոտ գտնվելը / 2.5կմ /
- Արտեզյան ջրերի մեծ պաշարների առկայությունը
- Բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կադրերի, բանվորական աշխատուժի առկայությունը
- Պատմական ԱՆԻ քաղաքի պատմա-մշակութային արժեքներին մոտ գտնվելը:

1.15. ՀԱՄԱՅՆՔԻ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ

- Ոռոգելի վարելահողերի բացակայությունը
- Բնակլիմայական ոչ բարենպաստ պայմանները
- 1988 թ. երկրաշարժի հետևանքով համայնքի բնակֆոնդի վնասվածությունը
- Համայնքի բնակչության սոցիալական անապահով վիճակը և ցածր կենսապայմանները
- 14 անավարտ անհատական բնակարանային շինարարությունը
- Բնակ. պայմանների բարելավման կարիք ունեցող 42 ընտանիքների առկայությունը
- Մշակույթի տան և մանկապարտեզի քայքայված ու անբարեկարգ վիճակը
- Խմելու ջրի ներտնտեսային ցանցի քայքայվածությունը
- Ներհամայնքային և դաշտամիջյան ճանապարհների քայքայվածությունը
- Գործազրկության բարձր մակարդակը
- Երիտասարդ ընտանիքների արտահոսքը համայնքից
- Տեղական բյուջեի սահմանափակ միջոցները

1.16. ՀԱՄԱՅՆՔԻ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Տուֆ քարի հանքավայրերի շահագործման ծավալների ավելացման և վերամշակման ճյուղի զարգացման միջոցով նոր աշխատատեղերի ստեղծում
- Ախուրյանի ջրամբարի և արտեզյան ստորգետնյա ջրային ռեսուրսների բազայի վրա ոռոգման համակարգի կառուցում
- Երկարաժամկետ և մատչելի տոկոսադրույքներով գյուղատնտեսական նպատակային վարկերի միջոցով գյուղմթերքների արտադրության ավելացում, վերամշակող փոքր ձեռնարկությունների հիմնադրում:

1.17. ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍՊԱՌՆԱՑՈՂ ՎՏԱՆԳՆԵՐԸ

- Սեյսմիկ գոտում գտնվելու հանգամանքը
- Կոյուղաջրերի հեռացման ցանցի բացակայությունը:
- Մշակույթի տան և մանկապարտեզի վթարային և քայքայված վիճակը
- Հողի հարկերի գանձման դժվարությունները
- Բնակլիմայական ոչ բարենպաստ պայմանները
- Երիտասարդ ընտանիքների արտագաղթը

2. ՀԱՄԱՅՆՔԻ ՈԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

1.2. Համայնքի ռազմավարությունն է.

Տնտեսական և սոցիալական ոլորտների բարեփոխումների ճանապարհով հետևողականորեն բարելավել համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական պայմանները, բարձրացնել բնակչության կենսամակարդակը:

Փոքր և միջին բիզնեսի զարգացման միջոցով ավելացնել նոր աշխատատեղեր և կանխել արտագաղթը համայնքից:

1.3. Հիմնական նպատակները

- Բնակավայրի կոյուղու ցանցի կառուցում.
- Խնելու ջրի պոնպակայանի նորոգում, ՕԿԶ-ի կառուցում, ջրաչափերի տեղադրում.
- Մշակույթի տան հիմնանորոգում.
- Մարզադաշտի կառուցում.
- Մանկապարտեզի նորոգում.

- Ներհամանքային ճանապարհների նորոգում.
- Ոռոգման ցանցի կառուցում.
- Գյուղացիական և ֆերմերային տնտեսությունների զարգացում.
- Տուֆ քարի հանքերի շահագործման ծավալների ավելացում, վերամշակման ճյուղի զարգացում.
- Համայնքում գործարար նախաձեռնությունների խթանում, գյուղ. մթերքների վերամշակման փոքր և միջին ձեռնարկատիրական գործունեության զարգացում.
- Անհատական բնակարանային շինարարության խթանում.
- Համայնքի մշակութային կյանքի աշխուժացում, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացում.
- Համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին աջակցություն.

3. ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ և ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

3.1 ՏԵՂԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ և ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Համայնքում ծառայություններ մատուցելու և ծրագրեր իրականացնելու համար կարևոր նշանակություն ունի համայնքի ֆինանսական միջոցների գնահատումը և կանխատեսումները:

Համայնքի բյուջեն հիմնականում ձևավորվում է հողի հարկից, գույքհարկից և վարձակալության տրված համայնքային սեփականության գյուղատնտեսական նշանակության հողերի վարձավճարներից:

Վերջին երեք տարիներին բյուջեի մուտքերի հիմնական մասը նպատակաուղղվել է ընթացիկ աշխատավարձերի վճարմանը, փոքրածավալ ծառայությունների մատուցմանը, սոցիալապես անապահով ընտանիքներին դրամական օգնությունների տրամադրմանը, ուսանողների ուսման վարձերի վճարմանը և խմելու ջրի պոմպի կապիտալ վերանորոգմանը: Համայնքի տեղական բյուջեի ֆինանսական կարողությունները հնարավորություն չեն տալիս լուծելու համայնքում առկա և հրատապ լուծում պահանջող հիմնախնդիրները:

Համայնքում առկա հիմնախնդիրների լուծման հարցում անհրաժեշտ է պետական և հանրապետությունում գործող միջազգային կազմակերպությունների ու հիմնադրամների աջակցությունը:

Համայնքը պատրաստակամ է բաժնեմասային / համաֆինանսավորման/ կարգով մասնակցություն ունենալ այլ կազմակերպությունների կողմից իրականացվող կապիտալ ներդրումային ծրագրերին, որի համար համաֆինանսավորման աղբյուր կարող է հանդիսանալ համայնքի բյուջեի սեփական միջոցները, համայնքի սեփականություն հանդիսացող հողատարածքների օտարումից գոյացող միջոցները, ինչպես նաև համայնքի բնակչության կողմից կատարվող ներդրումները:

3.2. ՏԵՂԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ և ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

		հազ. դրամ					
h/ h	Եկամուտի տեսակը	2016 թ. նախատես ված	2017 թ. նախատես ված	2018 թ. կանխա տեսում	2019 թ. կանխա- տեսում	2020 թ. կանխա- տեսում	2021 թ. կանխա տեսում
	Եկամուտներ, ընդ համենը	20371.6	20176,3	20682.8	21183.8	21684.8	22185.8
Ա	<i>Հարկային եկամուտներ</i>	8107.8	7912.5	8418.0	8918.0	9418.0	9918.0
1	Հողի հարկ	6846.9	6876,0	7250.0	7650.0	8050.0	8450.0
2	Գույքահարկ	1242.9	1018,5	1150.0	1250.0	1350.0	1450.0
4	Այլ հարկային եկամուտներ						
Բ	<i>Տուրքեր</i>	18.0	18,0	18.0	18.0	18.0	18.0
1	Պետական տուրքեր						
2	Տեղական տուրքեր	18.0	18,0	18.0	18.0	18.0	18.0
Գ	<i>Ոչ հարկային եկամուտներ</i>	1034.3	1034.3	1035.3	1036.3	1037.3	1038.3
1	Համայնքայի սեփականութ. հողերի վարձավճարներ	1030.3	1030,3	1030.3	1030.3	1030.3	1030.3
2	Գույքի վարձավճարներ						
3	Տեղական վճարներ	4.0	4,0	5.0	6.0	7.0	8.0
4	Այլ ոչ հարկային եկամուտներ						
5	Տեղ. ինք. մար. պետ. կողմ.						

	լիազ. իր. հ. մ.						
Դ	Պաշտոնական տրանսֆերտներ, դոտացիա	11229.5	11229,5	11229.5	11229.5	11229.5	11229.5
Ե	Եկամուտներ, կապիտալի գործառնություններ						
Զ	Տարեսկզբի ազատ մնացորդ						
Է	Ֆոնդային բյուջե						
6	Բյուջեի կատարում/տոկոս/						

3.3. ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱՔՐՈՒՄ ՆԵՐԱՌՎԱԾ ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵՌԿ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

հազ. դրամ

N	Ծրագրի անվանումը	Ծրագրի ընդհանուր արժեքը	Դոնոր կազմակերպության ներդրում	Համայնքի ներդրում	Ներդրման նախատեսվող ժամկետը
1	Բնակավայրի գիշերային լուսավորության ցանցի կառուցում	9000	0	9000	2017-2021 թթ..
2	Մշակույթի տան նորոգում	40000.0	36 000.0	4 000.0	2020 թ.
3	Ճանապարհների փոսային նորոգում	3 500.0	2 500.0	1 000.0	2018-2021 թթ..
4	Պոմպակայանի նորոգում	1 500.0	-	500.0 500.0 500.0	2018 թ. 2019 թ. 2020 թ.

3.4. ՏԵՂԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԱՊԱՌՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Տարածաշրջանին բնորոշ բնակլիմայական ոչ բարենպաստ պայմանների / կարկտահարություն, երաշտ, ցրտահարություն /, ոռոգելի հողատարածքների բացակայության, համայնքի բնակչության սոցիալական վատ պայմանների, ինչպես նաև տեղական ինքնակառավարման և հարկային մարմինների կողմից տարված անհետևողական աշխատանքի հետևանքով հողի սեփականաշնորհումից ի վեր սեփական եկամուտների գծով համայնքում կուտակվել են շուրջ 9.5 մլն. դրամի հողի հարկի ապառքներ և ներկայումս լուրջ դժվարություններ են ստեղծվել այդ ապառքների հավաքագրման գործում: Ձեռնարկված միջոցառումների շնորհիվ վերջին 3 տարիների ընթացքում հնարավոր է եղել հավաքագրել մոտ 12 մլն. դրամը : 01.01.2017թ. դրությամբ համայնքը աշխատավարձի և սոց. ապահովության վճարների գծով ապառքներ չունի:

Հողի հարկի ապառքների 35 տոկոսը անհուսալի են և պատկանում են հողի այն սեփականատերերին, ովքեր շուրջ 10 և ավելի տարիներ ընտանիքով բացակայում են հանրապետությունից, իսկ նրանց հողերը կամ չեն մշակվում կամ էլ առանց համապատասխան պայմանագրի ու պետական գրանցման օգտագործվում են նրանց հարազատների ու մտերիմների կողմից: Գյուղապետարանը իրավական հիմքեր չունի նշված ապառքները դատական կարգով հողի փաստացի օգտագործողներից գանձելու համար, իսկ աշխատանքի բերումով արտերկրներում հայտնված համայնքի անդամներին հողի սեփականությունից զրկելը հարցի լուծման իրատեսական տարբերակ չի համարվում:

3.5. ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԱՊԱՌՔՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԳՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

N	Ապառքի տեսակը	ապառքը 01.01.17թ դրուք.	2018թ	2019 թ.	2020 թ.	2021 թ.	հազ. դրամ
							Անհուսալի ապառքներ
1	Հողի հարկի ապառք	9500.0	2000.0	2000.0	2000.0	1000.0	35%

3.6. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՎԵՐՋԻՆ 10 ՏԱՐԻՆԵՐԻՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԾՐԱԳՐԵՐ ՄԱՍԻՆ

N	Ծրագրի անվանումը	Իրականացնող կազմակերպությունը	Ծրագրի ընդհանուր բյուջեն	որից		Իրականացման տարեթիվը
				Դոնոր կազմակ.	Համայնքի ներդրում	
1	Պոմպակայանի վերանորոգում, ջրի կուտակման տարրայի տեղադրում	«ԱԴՐԱ» հիմնադրամ	11000.0 ԱՄՆ դոլար	10000.0 ԱՄՆ դոլար	1000.0 ԱՄՆ դոլար	2001թ.
2	Դպրոցի հիմնանորոգում	ՄԱԿ-ի զարգացման ծրագիր	150000.0 ԱՄՆ դոլար	150000.0 ԱՄՆ դոլար	-	2002թ.
3	Խմելու ջրի ջրագծի կապիտալ վերանորոգում	«Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ	163877290 ՀՀ դրամ	147489571 ՀՀ դրամ	16387719 ՀՀ դրամ	2016թ.

4. ԸՍՏ ԱՈԱՆՁԻՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԻ ԱՈԱՋՆԱՅԵՐԹ ԾՐԱԳՐԵՐԻ, ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԱՈԱՋԱԴՐՈՒՄ և ԿՈՆԿՐԵՏ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՁևԱԿԵՐՊՈՒՄ

Ըստ առանձին բնագավառների ծրագրերի ընտրության և նրանց առաջնահերթության որոշման համար հիմք է հանդիսացել համայնքի ղեկավարի նախընտրական ծրագիրը և նամայնքի ղեկավարի նախընտրական քարոզարշավի ժամանակ համայնքի ընտրողների կողմից տրված պատվիրանները:

Ծրագրերի իրականացման, արժեքների գնահատման և հնարավոր ֆինանսավորման աղբյուրների բացահայտման համար հիմք են հանդիսացել տեղական բյուջեի ֆինանսական միջոցների վերլուծությունը, ՀՀ կառավարության տարածքային զարգացման ռազմավարությունը և հանրապետությունում գործող

Երրորդումային կազմակերպությունների ու հիմնադրամների հետ հաստատած համագործակցության կապերը:

2017- 2021 թթ. նախատեսվում է իրականացնել հետևյալ ծրագրերը.

Ծ Ր Ա Գ Ի Ր թիվ 1

ԾՐԱԳՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ

ՀՀ Շիրակի մարզի Բագրավան համայնքի արտաքին լուսավորության ցանցի կառուցում:

ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Բնակավայրի կենտրոնական փողոցների միակողմանի լուսավորություն :

Տեղադրել 90 հատ լուսանփոփներ մետաղյա խոխովակների վրա:

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ

- Ծրագրի նպատակն է լուսավորել բնակավայրի փողոցները, բարելավել բնակչության անվտանգ երթևեկությունը գիշերային ժամերին և նպաստավոր պայմաններ ստեղծել՝ համայնքի բնակչությանը անվտանգ տեղաշարժի և գյուղին ժամանակակից տեսք հաղորդելուն:

ԾՐԱԳՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

- Ըստ ամենայնի աջակցել ծրագրի աշխատանքներին, ապահովել անհրաժեշտ տեխնիկական պայմաններ:
- Ապահովել ծրագրի շրջանակներում համայնքից պահանջվող 9 մլն. դրամի ներդրումը.

ԾՐԱԳՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

- Բնակավայրի գիշերային լուսավորության ապահովում: Բարելավել բնակչության կենսամակարդակը և նպաստավոր պայմաններ ստեղծել՝ գյուղի բնակչությանը անվտանգ տեղաշարժվելու համար:

- **ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ**

Ծրագիրը ֆինանսավորվում է համայնքի բյուջեի միջոցներով:

Համայնքից պահանջվող ներդրումը կազմում է 9 մլն.դրամ:

ՆԵՐԴՐՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆ և ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ

Բագրավան համայնքի ղեկավար՝ Արտյոն Պետրոսյան:

Ծրագրի աջակիցներ՝ Բագրավան համայնքի ավագանու անդամներ:

Համայնքից պահանջվող ներդրումը ապահովել մինչև 2017- 2021 թթ.-ը:

Ծ Ր Ա Գ Ի Ր թիվ 2

ԾՐԱԳՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ

ՀՀ Շիրակի մարզի Բագրավան համայնքի մշակույթի տան վերանորոգում, գույքի ապահովում:

ՀԻՄՆԱԽՆԴՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ և ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

Համայնքի մշակույթի տունը կառուցվել է 1950-ական թվականներին և մինչ օրս հիմնական նորոգման չի ենթարկվել: Մշակույթի տունը համայնքի բնակչության հանգստի և ազատ ժամանցի կազմակերպման միակ օբեկտն է: Մշակույթի տանն է տեղակայված գյաղական գրադարանը իր 3000 կտոր գրականությամբ:

Մշակույթի տան քայքայվածության և անբարեկարգ վիճակի պատճառով մշակութային միջոցառումներ գրեթե չեն կազմակերպվում և այն հիմնականում չի ծառայում համայնքի բնակչության կարիքների համար: Մշակույթի տունը ապահովված չէ նաև անհրաժեշտ գույքով և սարքավորումներով: Համայնքի ուժերով վերջին տարիներին հնարավոր է եղել միայն մասնակիորեն նորոգել մշակույթի տան տանիքի առանձին հատվածներ և ինչ որ չափով կանխել շենքի հետագա քայքայումը: Տեղական բյուջեի սահմանափակ միջոցներով հնարավոր չէ իրականացնել մշակույթի տան հիմնանորոգման և գույքի նորացման մեծածավալ աշխատանքներ: Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ է պետական մարմինների, տեղական կամ միջազգային ներդրումային կազմակերպությունների ու հիմնադրամների աջակցությունը:

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ

Նորոգել մշակույթի տունը, այն համալրել ժամանակակից գույքով և հարմարավետ պայմաններ ստեղծել համայնքի բնակչության հանգստի ու ազատ ժամանցի

կազմակերպման, երիտասարդների մշակութային ու գեղագիտական դաստրարակության համար:

ԾՐԱԳՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

- Մշակել և Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամին / ՀՍՆՀ / ներկայացնել մշակույթի տան նորոգման և գույքի համալրման ծրագիր:
- Հարցի առնչությամբ դիմել ՀՀ Շիրակի մարզպետի աջակցությանը:
- Ապահովել ծրագրի կառավարումը և աշխատանքների կազմակերպումը:
- Ապահովել ՀՍՆՀ ծրագրի շրջանակներում համայնքից պահանջվող 10 տոկոս ներդրումը:

ԾՐԱԳՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Մշակույթի տուն նորոգման և այն ժամանակակից գույքով, երաժշտական գործիքներով և սարքավորումներով համալրելու շնորհիվ հարմարավետ պայմաններ ստեղծել համայնքի բնակչության հանգստի ու ազատ ժամանցի կազմակերպման, երիտասարդների մշակութային ու գեղագիտական դաստիարակության համար:

Կանխել մշակույթի տան հետագա քայքայումը:

ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Ըստ նախնական հաշվարկների ծրագրի իրականացման համար կպահանջվի 40.0 մլն. դրամ, որի 10 տոկոսը պարտավորություն է ստանձնում ապահովելու համայնքը:

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

Ծրագիրը նախատեսել իրականացնել 2020 թ. ընթացքում:

ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՄ

Բազրավան համայնքի ղեկավար՝ Արտյոն Պետրոսյան:

Ծ Ր Ա Գ Ր Ի Ր թիվ 3

ԾՐԱԳՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ

ՀՀ Շիրակի մարզի Բազրավան համայնքի ներհամայնքային ճանապարհների փոսային նորոգում:

ՀԻՄՆԱԽՆԴԻ ԵԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ և ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

Համայնքն ունի 4.0կմ. ընդհանուր երկարության ներհամայնքային ճանապարհներ, որից ասֆալտապատ է միայն բնակավայր մտնող փոքր հատվածը: Ներհամայնքային խճապատ ճանապարհների առանձին հատվածներ ամբողջությամբ քայքայված են և տրանսպորտային միջոցների համար դարձել են անանցանելի:

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ

Ծրագրի նպատակն է համայնքի տրանսպորտային և հետիոտն երթևեկության համար ապահովել բարեկարգ և հարմարավետ ճանապարհներ: Երթևեկելի դարձնել համայնքի քայքայված և անանցանելի ճանապարհները:

ԾՐԱԳՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

- Ուսումնասիրել ներհամայնքային ճանապարհների տեխնիկական վիճակը, ճշտել նորոգման ծավալները և կազմել թերությունների ակտ :
- Ճանապարհների նորոգումը կատարել խճապատման, սալարկման և մանրահատիկ ավազե ծածկույթի իրականացման միջոցով:
- Ծրագրի օժանդակ աշխատանքներն իրականացնել « Վարձատրվող հասարակական աշխատանքներ » ծրագրի շրջանակներում, որի համար 2014թ. հայտ - առաջարկ ներկայացնել ՀՀ Շիրակի մարզպետին և կազմել ծրագիր - առաջարկի փաստաթղթերի փաթեթ:
- Ծրագրի իրականացման համար պահանջվող շինարարական նյութերը, տրանսպորտային և տեխնիկական միջոցների շահագործումը ապահովել տեղական բյուջեի և համայնքի ներդրումների հաշվին:

ԾՐԱԳՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Համայնքի տրանսպորտային և հետիոտն երթևեկության համար կապահովվի բարեկարգ և հարմարավետ ճանապարհներ: Երթևեկելի կդառնան համայնքի քայքայված և անանցանելի ճանապարհահատվածները:

ԾՐԱԳՐԻ ԾԱՎԱԼՆԵՐԸ և ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

- Նախատեսվում է իրականացնել 3,5 կմ / 10000քառ. մ./ ներհամայնքային ճանապարհների փոսային նորոգուման աշխատանքներ:
- Ծրագրով նախատեսված օժանդակ աշխատանքների իրականացման համար « Վարձատրվող հասարակական աշխատանքներ » ծրագրի շրջանակներում ներգրավել 2.5մլն. դրամի ներդրում
- Ծրագրի իրականացման համար պահանջվող շինարարական նյութերի, տրանսպորտային և տեխնիկական միջոցների ապահովման համար տեղական բյուջեից կատարել 1.0մլն. դրամի ներդրում:

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

Ներհամայնքային ճանապարհների փոսային նորոգման աշխատանքները նախատեսել` 2018-2021 թվականներին:

ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՄ

Բազրավան համայնքի ղեկավար` Արտյոն Պետրոսյան:

Ծ Ր Ա Գ Ր Ի Ր թիվ 4

ԾՐԱԳՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ

ՀՀ Շիրակի մարզի Բազրավան համայնքի խմելու ջրի պոմպակայանի նորոգում:

ՀԻՄՆԱԽՆԴՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ և ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

Համայնքի խմելու ջուրը մատակարարվում է համայնքի սեփականությունը հանդիսացող լոկալ համակարգի միջոցով: Բնակավայրի տարածքում հորատված է 3 հորատանցք և արտեզյան ջրերը հանվում են տեղադրված 10 լ./վրկ. հզորությամբ 3 խորքային պոմպերի միջոցով: Ցանցի ընդհանուր երկարությունը կազմում է 12 կմ: Խորքային պոմպերից երկուսը վերանորոգված է, իսկ մեկը երկարատև շահագործման հետևանքով պոմպը աշխատում է իր դրվածքային հզորության 50

տոկոսի չափով: Պոմպի ֆիզիկական մաշվածության հետևանքով հաճախակի են դարձել խափանումները և բնակչության ջրամատակարարման ընդհատումները: Ստեղծված իրավիճակը արդարացի դժգոհություն է առաջացրել համայնքի ջուրսպառողների շրջանում և դժվարացրել ջրի վարձավճարների հավաքագրման աշխատանքները:

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ

Ծրագրի նպատակն է պոմպակայանի 1 խորքայի պոմպի հիմնական նորոգման միջոցով բարելավել համայնքի բնակչության խմելու ջրի մատակարարումները, բացառել պոմպի հաճախակի խափանումները և բնակչության ջրամատակարարման տևական ընդհատումները:

ԾՐԱԳՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

- Մասնագետների ներգրավմամբ ուսումնասիրել խորքային 1 պոմպի տեխնիկական վիճակը, ճշտել նորոգման ծավալները, կազմել թերությունների ակտ և նախահաշվային փաստաթղթեր:
- Ծրագիրն իրականացնել 2018-2020 թթ.:
- Ծրագրով նախատեսված աշխատանքներն իրականացնել համայնքի բյուջեի միջոցների հաշվին:

ԾՐԱԳՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Կբարելավվի համայնքի բնակչության խմելու ջրի մատակարարումը, կբացառվեն ջրամատակարարման ընդհատումները:

ԾՐԱԳՐԻ ԾԱՎԱԼՆԵՐԸ և ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

- Նախատեսվում է իրականացնել 10 լ./վրկ. հզորության 1 խորքային պոմպի հիմնական նորոգման աշխատանքներ:
- Ծրագրի իրականացման համար համայնքի բյուջեից ներդնել 1.5մլն դրամ, այդ թվում`
2018 թ. 3-րդ եռամսյակում` - 500.0 հազ. դրամ
2019 թ. 2-րդ եռամսյակում` - 500.0 հազ. դրամ
2020 թ. 3-րդ եռամսյակում` - 500.0 հազ. դրամ:

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

Խմելու ջրի Ներտնտեսային ցանցի և 1 խորքային պոմպի հիմնական նորոգման աշխատանքները նախատեսել` 2018 - 2020 թ.թ.-ին :

ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ՝

Բազրավան համայնքի ղեկավար` Արտյոն Պետրոսյան:

**5. ԲԱԳՐԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ
ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ**

Հ/ հ	Ցուցանիշներ	Չափման իավոր	2014թ. փաստ.	2015թ. փաստ.	2016թ. կանխ.	2017թ. կանխ.	2018թ. կանխ.	2019թ. կանխ.	2020թ. կանխ.
1.	Համայնքի վարչական տարածքը	հա	6254.7	6254.7	6254.7	6254.7	6254.7	6254.7	6254.7
2.	Բնակչության թիվը	մարդ	869	867	861				
3.	Բնակելի շենքերի ընդհանուր թիվը՝ ըստ կառավարման ձևերի (համայնք, համատիրություն, լիազորագրային, հավատարմագրային)	շենք	21	21	21	21	21	21	21
	Ընդհանուր մակերեսը՝ ըստ կառավարման ձևերի	հազ.քմ	3.11	3.11	3.11	3.11	3.11	3.11	3.11
	Բնակարանների թիվը՝ ըստ կառավարման ձևերի	բնակար.	42	42	42	42	42	42	42
	Անհատական բնակելի տների թիվը	տուն	179	179	179	179	179	179	179
	Անհատական բնակելի տների մակերեսը	հազ.քմ	19.5	19.5	19.5	19.5	19.5	19.5	19.5
4.	Վթարային շենքերի թիվը	շենք	0	0	0	0	0	0	0
5.	Վերելակային տնտեսություն		0	0	0	0	0	0	0
	Վերելակով շենքերի թիվը	շենք	0	0	0	0	0	0	0
	Վերելակների ընդհանուր թիվը	վերել.	0	0	0	0	0	0	0
	Գործող վերելակների թիվը	- // -	0	0	0	0	0	0	0
6.	Ավտոտնակների թիվը	հատ	0	0	0	0	0	0	0
7.	Համատիրությունների թիվը	հատ	0	0	0	0	0	0	0
8.	Տեղափոխվող աղբի քանակը	տոննա	0	0	0	0	0	0	0
	Այդ թվում՝ բնակչությունից		0	0	0	0	0	0	0
	Աղբավայրի առկայությունը և զբաղեցրած տարածքը	հազ.քմ	0	0	0	0	0	0	0
9.	Սանիտարական մաքրման և աղբահանության մեքենայական պարկի մեքենա-մեխանիզմներ	միավոր	0	0	0	0	0	0	0

	քանակը								
10.	Մանիտարական մաքրման տարածքը	հա	0	0	0	0	0	0	0
11.	Ոռոգման ցանցի երկարությունը	կմ	0	0	0	0	0	0	0
12.	Ոռոգելի տարածքի մակերեսը	հա	0	0	0	0	0	0	0
13.	Միջ բնակավայրային ճանապարհների երկարությունը	կմ	8	8	8	8	8	8	8
14	Ներբնակավայրային փողոցների և ճանապարհների երկարությունը	կմ	7	7	7	7	7	7	7
15	Առևտրի ծառայությունների Օբյեկտների թիվը, այդ թվում	հատ	1	1	1	2	3	4	4
	առևտրի օբյեկտներ	հատ	1	1	1	2	3	4	4
	ժ. 24-ից հետո աշխատող օբյեկտներ	հատ	0	0	0	0	0	0	0
	Բենզինի լիցքավորման կետեր	հատ	0	0	0	0	0	0	0
	Գազի լիցքավորման կետեր	հատ	0	0	0	0	0	0	0
16	Բնակարանի կարիքավոր ընտանիք. թիվը	ընտ.	15	15	15	12	11	10	9
17	Բնակարանային պայմանների բարելավման կարիքավոր ընտանիքներ	- // -	95	95	95	80	75	70	65
18	Նախադպրոցական հիմնարկների թիվը	հատ	0	0	0	0	1	1	1
	Երեխաների թիվը	մարդ	0	0	0	0	60	65	70
	Խմբերի թիվը	խումբ	0	0	0	0	4	4	4
19	Հանրակրթական դպրոցների թիվը	հատ	1	1	1	1	1	1	1
	Աշակերտների թիվը	մարդ	127	124	117	125	130	135	140
20	Երաժշտական դպրոցների թիվը	հատ	0	0	0	0	0	0	0
	Սովորողների թիվը	մարդ	0	0	0	0	0	0	0
21	Մարզադպրոցների թիվը	հատ	0	0	0	0	0	0	0
22	Արտադպրոցական հիմնարկների թիվը	հատ	0	0	0	0	0	0	0
23	Ակումբների թիվը	հատ	0	0	0				
24	Հիվանդանոցների թիվը	հատ	0	0	0	0	0	0	0
	Մահճակալների թիվը	հատ	0	0	0	0	0	0	0
25	Պոլիկլինիկա-ամբուլատորիաների թիվը	հատ	0	0	0	0	0	0	0

26	Կենսաթոշակառուների թիվը	մարդ	111	105	97	100	105	110	112
27	Հաշմանդամների թիվը	մարդ	17	17	17	18	18	19	20
28	Արտագնա/սեզոնային / աշխատանքի մեկնողների թիվը	մարդ	115	118	120	110	100	90	80
29	Գործազուրկների թիվը	մարդ	485	483	482	465	455	445	440
30	Փախստականների թիվը	մարդ	0	0	0	0	0	0	0
31.	Ընտանեկան նպաստ ստացող ընտանիքների թիվը	ընտ.	22	20	19	20	20	19	19
32	Համայնքի բյուջեի եկամուտների փաստացի կատարումը հաստատված պլանի նկատմամբ	%	69.86	86.44	87,0	89,0	91,0	95,0	100
33	Համայնքի բյուջեի եկամուտների փաստացի կատարումը ճշտված պլանի նկատմամբ	%	99.7	81.44	84,0	85,0	87,5	90,0	100
34	Համայնքի բյուջեի ծախսերի փաստացի կատարումը հաստատված պլանի նկատմամբ	%	128.45	77.73	80,0	85,0	90,0	95,0	100
35	Համայնքի բյուջեի ծախսերի փաստացի կատարումը ճշտված պլանի նկատմամբ	%	93.76	73.58	80,0	85,0	90,0	95,0	100
36	Համայնքի աշխատողների աշխատանքի վարձատրության ծախսերի տեսակարար կշիռը բյուջեի ընդհանուր ծախսերի մեջ	%	35.36	48.3	48,3	45,0	44,0	44,0	43,0

ԲԱԳՐԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԻ ՑԱՆԿԸ ԵՎ ՎԻՃԱԿԸ

Հ/հ	Կառույց	Հասցե	Կառուցման տարեթիվ	Ծավալ	Ընդհանուր վիճակի գնահատական	Նորոգման /վերականգնման/ փոխարինման կարիք	Այլ նշումներ
1.	Համայնքապետարանի շենք (ներառյալ անասնաբուժական կետի սենյակը, համայնքային ոստիկանի սենյակ)	6-րդ փողոց, շենք 1	1972թ.	303.9 քմ	բավարար	անհրաժեշտ է կոսմետիկ հարդարում	
2.	Նախադպրոցական ուսումնական հաստատության շենք	10-րդ փողոց, շենք 8	1967	648 քմ	շատ վատ	Անհրաժեշտ է կապիտալ վերակառուցում	
3.	Մշակույթի տան շենք	13-րդ փողոց, շենք 8	1961թ.	450քմ	շատ վատ	Անհրաժեշտ է կապիտալ վերակառուցում	
4.	Խմելու ջրի ներքին ցանց	Գ.Բագրավան	2016թ.	12000գծմ	լավ	---	
5.	Ներբնակավայրային ճանապարհներ ու փողոցներ	Գ. Բագրավան	1973 - 85թթ..	7000գծմ	վատ	Անհրաժեշտ է կապիտալ վերակառուցում	
6.	Գերեզմանատուն	Գ. Բագրավան	1965թ.	40000 քմ	բավարար	անհրաժեշտ է ցանկապատել	

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

1. Գյուղատնտեսական հողատեսքերը

Հողատեսքի անվանումը	հա	որից օգտագործվում է, հա
Ընդամենը գյուղատնտեսական հողատեսքեր	6254,7	
Վարելահող	2049,04	2003.5
Բազմամյա տնկարկներ	-	-
Խոտհարքներ	82,18	-
Արոտավայրեր	3380,04	2000.0
Այլ գյուղատնտեսական հողեր	348,61	-

2. Հիմնական մշակաբույսերի ցանքատարածությունների կառուցվածքը

Ցանքատարածությունների կառուցվածքը	2016 թ.	
	հա	%
Տորեն	700	34.0
Գարի	700	34.0
Բանջարեղեն	-	-
Կարտոֆիլ	-	-
Կերային մշակաբույսեր	150	7.2
Ընդամենը	1550	74.3

3. Հիմնական մշակաբույսերի համախառն բերքը և բերքատվությունը

Մշակաբույսերի տեսակները	2016 թ.
Հացահատիկային	մշակաբույսեր
Համախառն բերքը, տոննա	3780
1 հա -ի բերքատվությունը ,ցենտ.	27 ց.
Կարտոֆիլ	
Համախառն բերքը, տոննա	
1հա -ի բերքատվությունը, տ/հա	
Բանջարեղեն	
Համախառն բերքը, տոննա	
1 հա -ի բերքատվությունը	
Կերային	մշակաբույսեր
Համախառն բերքը, տոննա	450
1 հա -ի բերքատվությունը,ցենտ.	30,0

4 Անասնազլխաքանակը

(01.01.2016 թ. դրությամբ)

Հ/հ	Ցուցանիշները	Ընդամենը համայնքում
1.	Խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը, որից՝ Կովեր	582 306
2.	Խոզերի գլխաքանակը	490
3.	Ոչխարների և այծերի գլխաքանակը	830
4.	Ավանակների և ջորիների գլխաքանակը	0
5.	Զիերի գլխաքանակը	0
6.	Հավերի և այլ թռչունների գլխաքանակը	2753
7.	Մեղվաընտանիքների քանակը	658

5. Անասնապահական մթերքների արտադրության ծավալները և անասունների մեքրատվությունը

Անասնապահական մթերքի տեսակը	2016 թ.
Սսի իրացում, տոննա	60.0
Կաթի արտադրություն, տոննա	920
Բրդի արտադրություն, տոննա	1.9
Ձվի արտադրություն, հազ. հատ	208
1 կովի կաթնատվությունը, կգ	1600
1 ոչխարի բրդատվությունը, կգ	2.2
1 հավի ձվատվությունը, հատ	150

6. Համայնքում առկա գյուղատնտեսական մեքենաներ ու գործիքներ

Հ/հ	Ցուցանիշները	Ընդամենը համայնքում
6.	Մարդատար ավտոմեքենաներ	75
7.	Բեռնատար ավտոմեքենաներ	9
8.	Կոմբայններ	5
9.	Վարի տրակտորներ, որից՝	8
	Թրթուռավոր	2
	Անվավոր(Կիրովեցներ)	6
10.	Բելառուսներ	4

7.Շիրակի մարզի Բագրավանի համայնքապետարանի հաստիքացուցակ

Հ/հ	Պաշտոնի անվանումը (համայնքային ծառայության պաշտոնների մասով և՛ս ծածկագիրը)	Հաստիքների քանակը	Հաստիքային միավորը	Պաշտոնային դրույքաչափը (ՀՀ դրամ)
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ				
1.	Համայնքի ղեկավար	1	1	215000
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ				
2.	Աշխատակազմի քարտուղար (1.2-1)	1	1	170000
3.	Առաջատար մասնագետ-հաշվապահ (3.1-1)	1	1	165000
4.	Առաջատար մասնագետ (3.1-2)	1	1	165000
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑՈՂ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁՆԱԿԱԶՄ				
5.	Ակումբավար	1	1	72800
6.	Համակարգչի օպերատոր	1	1	90000
7.	Հարկային գործակալ	1	1	90000
8.	Պոմպակայանի փականակագործ	1	1	90000
	Ընդամենը	8	8	842800

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԲԱԳՐԱՎԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՏԻՄ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ



